

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2022-8-1-Ա

ք. Երևան

06.10.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի հոկտեմբերի 6-ի նիստում քննարկեց 2022 թվականի մարտի 24-ին անհատ ձեռնարկատեր Էլմիրա Սեյրանյան Գերասիմի (Երևան, Փափագյան ՇՆ., 90/1, AM) «212 STUDIO» (№20211665) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում և, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին և գրանցման է ներկայացված ապրանքների և (կամ) ծառայությունների համար, որոնք նույնատիպ չեն այն ապրանքներին և (կամ) ծառայություններին, որոնց համար գրանցված է ավելի վաղ ապրանքային նշանը, այն դեպքում, երբ ավելի վաղ ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում ունի բարի համբավ, և եթե հայտարկված ապրանքային նշանի օգտագործումն անհիմն առավելությունների կհանգեցնի՝ ավելի վաղ ապրանքային նշանի տարբերակիչ հատկության կամ բարի համբավի շնորհիվ կամ վնաս կհասցնի ավելի վաղ ապրանքային նշանի տարբերակիչ հատկությանը կամ բարին համբավին: Տվյալ դեպքում հայտարկված համակցված ապրանքային նշանը ներկայացվել է գրանցման 44-րդ դասի ծառայությունների համար, սակայն շփոթելու աստիճան նման է 3-րդ դասի ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «212 CAROLINA HERRERA» (CAROLINA HERRERA LTD. 501 Seventh Ave. 17th Floor 10018 New York USA, N 5854, 20.02.2001) բառային ապրանքային նշանին, քանի որ մատուցվող ծառայությունների շրջանակը փոխկապակցված է գրանցված ապրանքային նշանի ապրանքների օգտագործման ոլորտի հետ, այն է՝ գեղեցկության սրահում նման ապրանքները կարող են թե՛ օգտագործվել և թե՛ վաճառվել, ինչն էլ

կարող է կապ ենթադրել գրանցված ապրանքային նշանի իրավատիրոջ հետ և վնաս հասցնել նրա տարբերակիչ հատկությանը կամ բարի համբավին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ծառայություններ մատուցողի վերաբերյալ հարցերում: Կարգի 130-րդ կետի 2-րդ ենթակետի, 122-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման կարող են համարվել ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում գրանցված բառային ապրանքային նշանի «212» տարրն ամբողջությամբ ներառված է գրանցված համակցված ապրանքային նշանի մեջ:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակի բավարարելու, փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանին մասնակի իրավական պահպանություն տալու մասին, քանի որ գեղեցկության սրահների ծառայությունների համար, որոնց համար հայտարկված է «212 STUDIO» ապրանքային նշանը սպառողներին չի կարող մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում, ինչպես նաև շփոթելու աստիճան նմանության խնդիր չի առաջացնի 3-րդ դասի ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «212 CAROLINA HERRERA» (CAROLINA HERRERA LTD. 501 Seventh Ave. 17th Floor 10018 New York USA, N 5854, 20.02.2001) բառային ապրանքային նշանի հետ:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

## Ո Ր Ո Շ Ե Ց

Ներկայացուցիչ Արթուր Վարդերեսյանի կողմից ներկայացված անհատ ձեռնարկատեր Էլմիրա Սեյրանյան Գերասիմի «212 STUDIO» (No20211665) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մասնակի բավարարել, փորձաքննության որոշումն մասնակի չեղյալ ճանաչել և ապրանքային նշանին մասնակի իրավական պահպանություն տալ հետևյալ ծառայությունների համար՝ դաս 44. գեղեցկության սրահի ծառայություններ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ